ՍՈՒՍԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐ ՄԱԴԻՆԱՅԻ ՏՈՀՄԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԻՑ

Մադինա, Մատինա, Մեդինա բնակավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքից 10 կմ հարավ-արևմուտք: Մադինան հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով. գյուղի կենտրոնում բացվել են անտիկ, գյուղամերձ տարածքներում՝ հին և միջնադարյան դամբարաններ: Բնակավայրի տարբեր մասերում կան խաչքարեր: Գյուղից դուրս՝ բլրի ստորոտում, գտնվում է միջնադարյան գերեզմանատունը, որտեղ պահպանվել են չորս տասնյակից ավելի կոթողներ՝ խաչքարեր, օրորոցաձև ու հարթ տապանաքարեր (X-XVIII դդ.): Այստեղից մեզ հաջողվեց ընթերցել ու հավաքել ավելի քան երկու տասնյակ արձանագրություն, որոնք վերաբերում են 1251-1713 թթ.:

Բանալի բառեր՝ *Մադինա, Գեղարքունիք, տապանաքար, միջնադարյան, գերեզմանատուն, արձանագրություն, խաչքար, կոթող, օրորոցաձև, հուշարձան:*

ՀՀ Գեղարքունիքի մարզը հարուստ է պատմաճարտարապետական կոթողներով (մոտ 5270 միավոր)[1], որոնց ուսումնասիրումը սկսվել է դեռևս XIX դարում (Հ. Շահխաթունյանց, Ս. Ջալալյանց, Մ. Սմբատյանց, Ղևոնդ Ալիշան, Ե. Լալայան): Նորագույն շրջանում այդ հուշարձանների ուսումնասիրությունը կատարվեց համակողմանի. հնագիտական պեղումներին զուգահեռ ուշադրություն դարձրեցին նաև արձանագրություններին, որոնք հետագայում ամփոփվեցին Դիվան հայ վիմագրության Գեղարքունիքի պրակում[2] (թվով 1546 արձանագրություն): Քանի որ գիտական վերջին ուսումնասիրություններն այստեղ կատարվել են XX դարի 70-ական թթ., ուստի անհրաժեշտություն կար հայտնաբերել նոր կոթողներ, ինչպես նաև՝ արձանագրություններ: Արդյունքում, 2014-2016 թթ. ընթացքում մարզի բնակավայրերից մեզ հաջողվեց հավաքել մոտ 60 վիմագիր, այդ թվում՝ 21-ը Մադինա գյուղից, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Մադինա, Մատինա, Վերին Մեդինա (հավանաբար առաջացել է պարսկերեն մադան, մադեն՝ հանք, հանքավայր, մադանի՝ հանքային բառից[3]) բնակավայրը գտնվում է Մարտունի քաղաքից 10 կմ հարավ-արևմուտք՝ Արգիճի գետի ձախ ափին՝ բարձադիր ու գեղատեսիլ սարալանջի վրա (ծովի մակերևույթից բարձր է 2100 մ): Բաղկացած է եղել երկու մասից՝ Վերին և Ներքին Մադինա, ըստ որում Ներքին Մադինան ավելի հին է, ինչի մասին են վկայում միջնադարյան եկեղեցու հիմնապատերն ու խաչքարերը: Նախկինում այստեղ

1 **Հակոբյան Ս.,** ՀՀ մարզերը, Գեղարքունիք, պատմական հանրագիտարան, Երևան, 2010, էջ 9:

2 **Դիվան հայ վիմագրության,** պրակ IV, Երևան, 1974:

3 Պարսկերենից թարգմանությունը կատարել է ՀԱԻ գիտաշխատող, պարսկագետ Տիգրան Սարգսյանը:

բնակվել են թուրքեր՝ տեղափոխված Երևանի գավառի Ջըղի գյուղից[1]: Տեղագիր Հ. եպիս. Շահխաթունյանցի հիշատակմամբ XIX դարի 30-ական թթ. գյուղն ուներ 11 տուն[2], իսկ դարի երկրորդ կեսին, ըստ Մ. Սմբատյանցի, այն Նոր Բայազետից Վայոց ձոր տանող ճանապարհի թուրքական գյուղերից էր և ուներ 27 տուն[3]: Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները տեղափոխվել են 1922 թ. Ներքին Գետաշենից[4]:

Մադինայի կենտրոնում բացվել են անտիկ, իսկ գյուղամերձ տարածքներում՝ հին և միջնադարյան դամբարաններ[5]: Բնակավայրի տարբեր մասերում կան IX-X դդ. խաչքարեր[6]:

Ներքին Գետաշենից Մադինա տանող ձախ հատվածում, բլրի ստորոտում գտնվում է միջնադարյան գերզմանատունը, որտեղ պահպանվել են չորս տասնյակից ավելի կոթողներ՝ խաչքարեր, օրորոցաձև ու հարթ տապանաքարեր (XI-XVIII դդ., մի մասը կիսով չափ հողի մեջ են): Պարզ և անգիր խաչքարերը ցրված են գերեզմանատան ամբողջ տարածքում, պահպանվել են նաև դրանց քարե պատվանդանները: Օրորոցաձև տապանաքարերը արձանագիր են, կան նաև կցագրեր, զարդահյուսեր, գեղեցիկ խաչաքանդակներ: Համեմատաբար հողմահարվել են հարթ տապանաքարերի արձանագրությունները: Գերեզմանատնից ոչ հեռու կա ավերակ բնակատեղի և եկեղեցի՝ մասամբ կամ գրեթե ամբողջությամբ հողի մեջ թաղված տապանաքարերով ու խաչքարերով, որից երեքն արձանագիր են: Ստորև ներկայացնում ենք տարածքից ընթերցված 20 վիմագրերը:

1. *Գերեզմանատուն*, օրորոցաձև միջին չափի տապանաքար, 5 տող (3 տող՝ հյուսիսային կողին, 2 տող՝ կամարին), (գրչագիր 1).

ՍԲ ԽԱՉ ԲԱՐ/ ԵԽԱԻՍ ԳՐԻԳՈՐԻՆ ՈՐԴԻ Ե/ՂԻԵԻՆ. ԹՎԻՆ Ռճ (1651) / ՇԻՐԻՆ/ ԻՆ

2. Հարթ տապանաքար, 6 տող, (գրչագիր 2).

ԱՅՍ Է ՀԱՆ/ ԳԻՍՏ ԸՍՈ/ ՉԱՌԻՆ ԿՈ/ ՂԱԿԻՑ ԵՂ/ ԷԻՆ. ԹՎԻ/ Ն ՌԺԺ(1661)

3. Օրորոցաձև տապանաքար, կիսաթեք հողի մեջ, հարավային կողին պատկերված են մեկ ձիավոր և երեք մարդ, թվականը ելնդագիր է, 4 տող, (գրչագիր 3).

1 **Լալայեան Ե.,** Ազգագրական հանդէս, Նոր Բայազեդի գաւառ կամ Գեղարքունիք, գիրք 18, թիվ 2, Թիֆլիս, 1908, էջ 152-153: Ջըղընը գտնվել է Երևանի նահանգի Երևանի գավառի Վեդիբասարի ոստիկանական շրջանում: 1873թ. ունեցել է 20 տուն՝ 160 բնակիչով: Հայտնի է նաև Ճիղին Կիււ կամ Ջիղին Գյոլ տարբերակով: Տե՛ս **Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան՝** այսուհետ **ՀՀՇՏԲ,** հատոր 4, Երևան, 1998, էջ 404: **Ալիշան**, Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 551:

2 **Յովհաննէս եպիս. Շախաթունեանց**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, (վերահրատարակություն՝ Ա. Տեր-Ստեփանյանի խմբագրությամբ), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2014, էջ 380: Ներքին Մադինան (թուրքաբնակ) գտնվել է Վերին Մադինայից 5-6 կմ հյուսիս, XX դարի սկզբին ուներ 41 տուն: Տե՛ս **ՀՀՇՏԲ,** հատոր 3, Երևան, 1991, էջ 626:

3 **Սմբատեանց Մ.,** Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1896, էջ 521:

4 ***ՀՀՇՏԲ***, հատոր 3, Երևան, 1991, էջ 626: ***ՀՍՀ,*** հատոր 7, Երևան, 1981, էջ 126:

5 ***Խաչատրյան Ժ., Քալանթարյան Ա.,*** Մարտունու և Վարդենիսի շրջանների անտիկ և միջնադարյան հուշարձանները, Լրաբեր, 1972, թիվ 1, էջ 64:

6 Մի քանի խաչքարեր էլ կրկնակի օգտագործման են ենթարկվել՝ տեղադրվելով նորագույն գերեզմանների վրա իբրև հուշաքարեր: Գյուղացիներից մեկի տնամերձում կան մի քանի խաչքարեր, քարե պատվանդան և բեկորներ: Դրանցից միայն մեկի վրա պահպանվել է խիստ հողմահարված երկու տողանոց արձանագրություն: Նախնական ընթերցմամբ այն ընթերցվում է. [ՀԱՅ]ՈՑ Թ. ՌԵ (1556) …ԵՑԱՆ/ --ՆԲ ԵԾԱՇՈԿ/Կ:

[ԿԱՄԱՒ]Ն ԱՅ ԵՍ ՏՐ ՍՌ/ ԻՔԷԱՍՍ ԷՂԻԵՍ ԹՌՒՄԱՆԱ ԿԱՆԳՆԵՑԱ ՍԲ ԽՉՍ Բ/ԱՐԵԽԱ[ՒՍ] / ԹՎ. ՌՃԻԸ (1679)

4. Օրորոցաձև մեծ տապանաքար, հյուսիսային կողին, 3 տող, (գրչագիր 4).

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷ/ ԽԱՒՍ ՄԷՍՐՈՓԻՆ ՈՐԴԻ ՄԻՆԱՍԻՆ / ԹՎ. ՌՃԼԳ (1684)

5. Օրորոցաձև միջին չափի տապանաքար, 4 տող, (գրչագիր 5).

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷ/ԽԱՒՍ ԽՌՒՏԱՊԱԽՇԻՆ ՈՐԴԻ ՏՐ/ ՍՌՒՔԻԵԱՍԻՆ/ ԹՈՌՆ ՇԻՐԻՆԻՆ ԹՎ. ՌՃԽԴ (1695)

6. Հարթ տապանաքար, 5 տող, (գրչագիր 6).

ԱՅՍ Է ՀԱՆԳ/ԻՍՏ ԽԱՆՈՒՄ/ ԻՆ ԿՈՂԱԿԻՑ / ՇԻՐԻՆ: Թ. Ռ/ՃԽԸ (1699) [ԵՐ]

7. Օրորոցաձև մեծ տապանաքար, հարավային կողին 3 տող, (գրչագիր 7).

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷ/ ԽԱՒՍ ՄՈՎՍԷՍԻՆ ՈՐԴԻ ՇԱՐԻՆԻՆ /ԹՎ: ՌՃԾ (1701)

8. Հարթ տապանաքար, 8 տող, (գրչագիր 8).

ԱՅՍ Է ՀԱ/ ՆԳԻՍՏ / ԳՈԼԱՒՉԱՐ/ ԻՆ ԿՈՂԱԿ/ ԻՑՍ ՄՈՒՆ/ ԻՆ/ ԹՎ ՌՃԿ/Բ (1713)

Ծանոթ. հնարավոր է Թունման կամ Մունի նույն անձն է համարվում:

9\. Հարթ, փոքր տապանաքար, 3 տող, (գրչագիր 9).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՉՅՆԻՆ / ԿՈՂԱԿԻՑ ԱՂԱՅՃԱՆԻՆ/ Թ. ՌՃԿԲ (1713)

10. Օրորոցաձև տապանաքար, արձանագրությունը հողմահարված, 3 տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳ/ ԻՍՏ Գ_ԱՐԻ_ _ԻՆ .... ՈՐԴԻ _/ ՌԻ (1571)

Ծանոթ. քանի որ թվականը եղծված է, ուստի ընթերցում կարող է թերի լինել:

11\. Հարթ տապանքար, 5 տող, (գրչագիր 10).

ԱՅՍ Է ՀԱՆ/ԳԻՍՏ ՀԱԹ/ԻՆ ԿՈՂԱԿԻՑ/ ՆԱՐՍԷՍԻՆ/ ԹՎ. ՌՃԿԲ (1713)

12. Օրորոցաձև մեծ տապանաքար, 4 տող, (գրչագիր 11).

ԱՅՍ Է ՀԱՆԳ/ ԻՍՏ ԱՂԱՅՃԱՆԻՆ ՈՐԴԻ ԹՆՄԱՆ/ ԻՆ/ ԹՎ. ՌՃԿԲ(1713)

13. Օրորոցաձև մեծ տապանաքար, 3 տող, (գրչագիր 12).

ԱՅՍ Է ՀԱՆ/ԳԻՍՏ ԹԻՆՄԱՆԻՆ ՈՐԴԻ ՇԻՐԻՆ/ ԹՎ ՌՃԿԲ (1713)

14. Օրորոցաձև փոքր տապանաքար, կիսով չափ հողի մեջ, 3 տող.

ԱՅՍ Է Հ/ ԱՆԳԻՍՏ ..... ՈՐԴԻ / ԹՆ[մանին]/ ԹՎ ՌՃԿԲ (1713)

15. Օրորոցաձև տապանաքար, հողի մեջ թաղված, հարավային կողին՝ 3 տող, (գրչագիր 13).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻ/ ՍՏ ՄԿՐՏԻՉԻՆ ՈՐԴԻ ԹՆՄԱՒՆ/ ԹՎ. ՌՃԿԲ (1713)

16. Օրորոցաձև փոքր չափերի տապանքար, 3 տող, (գրչագիր 14).

ԱՅՍ Է ՀԱՆ/ԳԻՍՏ ՍԱՐՔԻՍԻ ՈՐԴԻ Թ/ՈՒՆՄԱՆԻՆ

17. Օրորոցաձև մեծ տապանաքար, 3 տող, (գրչագիր 15).

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԴԱՆԻ/ ԵԼՍ ՈՐԴԻ ԽՈՃԻԿԻՆ ԿԱՆԳՆԵՑԻ ՍԲ ԽՉՍ ԲԱ[րեխաւս] / .....ԻՆ ԻՄՈՅ ՊԱՂԻՆ

18. Ավերակ բնակատեղի, օրորոցաձև տապանաքար, 2 տող, (գրչագիր 16).

ԱԹԱԼԻՆ ՊԵԿՍ ԿԱՆԵՑԻ ԽԱՉՍ/ Ի ԹՎ: Ձ:Ղ:Ը: (1349)

19. Հավանաբար խաչքարի քիվ, կոթողը թողված է հողի մեջ, միայն քիվի մասն է երևում, 1 տող, (գրչագիր 17).

ՍԲ ԽԱՉՍ ՆԵՐՍԷՍԻՆ ԹՎ. Չ (1251)

Ծանոթ. Խաչքարի անկյունները կոտրված են, որի հետևանքով էլ թվագրումը կատարվել է պահպանված հարյուրավորի միջոցով:

20. Խաչքար, մեծադիր, շքեղ զարդաքանդակներով, արձանագրությունը խաչքարի քիվին և խաչից ներքև, թվագրումը՝ խաչի հորիզոնական թևերին, 3 տող, (գրչագիր 18).

ԿԱՆ[ԳՆ]ԵՑԱ Խ[Ա]ՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ[ԻՆ] ՏՐ ՈՐ ....ԱՑ/ ԻՆ ԵՒ ԶԱՎԱԿԱՑ ԶՈՐ Ի Ժ..... / ԹՎ. ՉԽԹ (1300)

Արձանագրությունների վերծանության արդյունքում պարզ դարձավ, որ գերեզմանատունը գործել է կարճ՝ մոտ յոթանասուն տարի՝ 1651-1713 թթ.-ին: Ըստ որում, 1713 թ. հետո տապանագրեր չկան: Անբացատրելի էր այն, որ տապանագրերից 7-ը թվագրվում են հենց ՌՃԿԲ (1713) թվով. նույն տարում մահացել են ծնողները, 3 զավակները և հարսը: Արդյո՞ք պատահականություն է. հայ մատենագրության մեջ երկու հիշատակություն կա՝ կապված 1713 թ.-ի հետ. առաջինը հետևյալն է. «Մահին քառասունքումն հանեց էն տարին, մահին պատեց աշխարիըս, որ սիթամ յեղաւ Ղարաքիլիսու ՌՃԿԲ (1713) թվին»[1]: Երկրորդ հիշատակությունն է. «Թվին ՌՃԾԹ (1710)-էն մինչև թվին ՌՃԿԷ (1718) –ըն խիստ սօվ սաստիկ ելաւ, որ մինչև ը(8) տարի ցորենն լիտրն մեկ ապասէն մինչև Բ(2) ապասի ծախվեց»[2]: Փաստորեն, սովի և զրկանքի ծանր տարիներ են եղել, որն էլ կարող էր լինել ընտանիքի անդամների մահվան պատճառ:

Պարզվեց նաև, որ տապանաքարերը պատկանում է մի գերդաստանի երեք սերնդի ննջեցյալներին: Գերդաստանի ավագի՝ Շիրինի կամ Շարինի տապանաքարը չգտնվեց, իսկ ընտանիքի չորս հարսերի տապանաքարերը հարթ են ու անշուք: Տապանագրերում, ցավոք, հիշատակություն չկա նրանց բնակավայրի կամ որտեղից լինելու մասին: Ենթադրում ենք, որ ննջեցյալները տեղաբնիկներ չեն եղել և,հավանաբար, քաղաքական նկատառումներից ելնելով տեղափոխվել են ավելի ապահով վայր, որտեղ էլ կնքել են մահկանցուները: Դրա մասին է վկայում նաև երեք կանանց օտարահունչ անունները (Ըոզառ, Զյն, Հաթի), որոնք երբևէ չեն հանդիպել հայ իրականության մեջ:

Այսպիսով, Մադինայի վիմագրերի շնորհիվ պարզ դարձավ, որ բնակատեղին գոյություն է ունեցել XIII դարից: Այն հավանաբար ծաղկում է ապրել նաև XVII-XVIII դդ., որից հետո դարձել է ամայի:

---

1 **Մանր ժամանակագրություններ,** XIII-XVIII դդ., կազմեց՝ Վ. Հակոբյանը, հատոր 2, Երևան, 1956, էջ 523:

2 Նշվ. աշխ., էջ 524: Լիտր կշռային միավորը Հայաստանում գործածական է եղել վաղ միջնադարից: Հայտնի է բյուզանդական լիտրը՝335 գրամ, հայկական՝ 320.4 գրամ, Բաղդատի՝ 3436 գրամ, Հալեպի՝ 1442.5 գրամ կշռաչափման միավորները: Արաբական ժամանակաշրջանում այն հավասար էր 408 գրամի: Լիտր կշռաչափը հանդիպում ենք ինչպես վիմագրական, այնպես էլ մատենագիտական աղբյուրներում: Տե՛ս **Ա. Հարությունյան,** Նորահայտ վիմագրեր «լիտր» կշռաչափի վերաբերյալ, ՎԷՄ, 2012, թիվ 4, էջ 99-108:

ԳՐՉԱԳՐԵՐ

գրչագիր 1



գրչագիր 2

գրչագիր 3



գրչագիր 4

գրչագիր 5

գրչագիր 6



գրչագիր 7



գրչագիր 8



գրչագիր 9

գրչագիր 10

գրչագիր 11



գրչագիր 12



գրչագիր 13

գրչագիր 14

գրչագիր 15



գրչագիր 16

գրչագիր 17



գրչագիր 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Ղևոնդ, Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890,
2. Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Երևան, 1974:
3. Լալայեան Ե., Ազգագրական հանդէս, Նոր Բայազեդի գաւառ կամ Գեղարքունիք, գիրք 18, թիվ 2, Թիֆլիս, 1908:
4. Խաչատրյան Ժ., Քալանթարյան Ա., Մարտունու և Վարդենիսի շրջանների անտիկ և միջնադարյան հուշարձանները, Լրաբեր, 1972, թիվ 1, էջ 64:
5. Հակոբյան Ս., ՀՀ մարզերը, Գեղարքունիք, պատմական հանրագիտարան, Երևան, 2010:
6. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, Երևան, 1991:
7. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, Երևան, 1998:
8. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 7, Երևան, 1981, էջ 126:
9. Հարությունյան Ա., Նորահայտ վիմագրեր «լիտր» կշռաչափի վերաբերյալ, ՎԷՄ, 2012, թիվ 4, էջ 99-108:
10. Շախաթունեանց Յովհաննէս եպիս., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, (վերահրատարակություն՝ Ա. Տեր-Ստեփանյանի խմբագրությամբ), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2014:
11. Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., կազմեց՝ Վ. Հակոբյանը, հատոր 2, Երևան, 1956:
12. Սմբատեանց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1896:

SUSANNA ADAMYAN - NEW INSCRIPTIONS FROM MADINA´S FAMILY CEMETRY - Gegharquniq region is rich with historical and architectural monuments, which number arrives to 5270. In the XIX century Armenian surveyors and foreign authors studied the monuments in the province of New Bayazet. During the newest period the monument studies were done comprehensively.

Particularly the study of epigraphic inscriptions gave a new flour to the historical studies of Gegharkuniq region. These are summarized in epigraphy materials of «Divan of Armenian epigraphy » (regions of Gegharkuniq, Kamo, Martuni and Vardenis). Since recent scientific studies had been done in the 70s of XX century, it is necessary to explore the region to identify new records. As a result, we managed to record more than 20 inscriptions from from village Madina, which are being published for the fisrt time.Those inscriptions refer to 1251-1713.

Key words: Gegharquniq, surveyors, inscription, Madina, epigraphy, Divan, monument.

СУСАННА АДАМЯН - СВЕЖЕНАЙДИННЫЕ В МАДИНЕ НАДПИСИ НА РОДОВОМ КЛАДБИЩЕ - Местность Мадина находится в 10 киллометрах от юго-запада от города Мартуни области Гехаркуник. Медина богата архитектурно-историческими памятниками.В центре села в античных окрестностях есть древние средневековые гробницы. В разных частях местности есть камни с резным изобрадением креста.За пределами села в правой части дороги у подножия холма находится средневековое кладбище, где более четырех десятков лет созранились памятники, камни с резным изображением креста, плоские надгробные плитки (10-18веков). Нам удалось изучить и собрать более чем два десятка надписей 1251-1713 годов.

Ключевые слова: Мадина, Мартуни, Гехаркуник, средневековые, памятник, кладбища.